

տեն Ս. Գէորգը, թէպէտ վանքին առասպելը դեռ կենդանի:

Նաթանեան կը գրէ՝ (էջ 144) «Քաղաքէն 12 ժամ հեռաւորութեամբ դէպ արեւելեան հարաւ Հայոց գիւղ մի կայ Գեւոցայ (ի ծանն. Գեւոցայ վանքին տեղը ժամանակաւ դեւեր բնակելուն համար, եւ վերջը հալածուելով Ս. Գէորգ վանքը շինուած ըլլալուն, վանքն ալ կը յիշուի Դեւոցայ) անուամբ որուն կից յանուն սրբոյն Գէորգայ վանք մը կայ եղեր. այս ալ նոյնպէս աւերակ դարձած է միայն տեղը յայտնի կենալով, գիւղացիք ամէն ատեն ուխտի կ'երթան», : Աղեքսանդրեան (էջ 362) կը գրէ. «Ս. Գէորգ, Գէվէքսէի մօտ, որ առաջ բաւական պայծառ էր, եւ իրմէ կը կախուէին հոգեւորապէս իբրեւ սեպհական վիճակ՝ Ջառա, Թոտորակ, Գէվէքսէ կամ Գեւոցա, Ալաքիլիսէ, Քարհատ եւ Թէքէլի գիւղերը. հիմակ այս վանքն աւերակ է», : Իսկ Բ. Հայքեցեան (էջ 123—4) կը գրէ՝ աւելի բանասիրական եւ դրական ձեւ մը տալ ուզելով առասպելին. «Տէվէկսու Ս. Գէորգ կամ Գեւոցայ վանք, Սեբաստիայէն 10 ժամ յարեւելս Ալիսի ձախակողմը Տէվէկսէ կամ Գեւոցայ գիւղի մերձ, գրեթէ վանք շաբաթացեալ: Յանցելումն շէն ու փառաւոր վանք մը եղած է: Այժմ Ս. Նշան վանուց իրաւասութեան ենթարկուած է եւ հողերը վարձով մշակել կը տրուին: Աւանդաբար կ'ըսուի թէ ժամանակաւ մօտերը բնակող Դեւ-օճ մը ժամանակ ժամանակ վանքին նա-